



թ. 16. Աւետարան 1729ի, էջ 138.
Ստորագր. ստորեւ, աջակողմը՝ հագիւ տեսանելի.

պէս այս նկարին քիչէն Ոսկանի Աստուածաշունչին մէջ 1666-8ին Ամստերտամ հրատարակուելէ վերջ 1752ին Կ. Պոլիս կու գայ Գրգռի Եռամասնեային մէջ տըպուելու համար, ինծի համար առ այժմ դժուար է բացատրել: Ոսկանի տպարանը, որուն համար անշուշտ գնուած էին նաեւ Աստուածաշունչի փայտափորագրեալ պատկերները՝ Մարսիլիա փոխադրուեցաւ, սակայն ոչ ամբողջութեամբ, այլ մաս մը մնաց Ամստերտամ որ ըստ Սարուխանի հուսկ Լայպցիկ տարուեցան: Սակայն թէ անկէ վերջ ի՞նչ եղան յայտնի չէ: Իսկ Մարսիլիա տարուած մասը դարձեալ բերուեցաւ Ամստերտամ, վերջապէս մաս մը՝ ժամանակ վերջ Միխիթար Աբրահօր ձեռքն անցան, սակայն ինծի յայտնի չէ թէ փայտափորագրեալ պատկերներն ալ Ս. Ղազար բերուեցան թէ ո՛չ: Իսկ թէ ի՞նչպէս այդ փայտափորագրութիւններէն մին Կ. Պոլսոյ 1752ի վերոյիշեալ հրատարակութեան մէջ կրցած է տեղ գտնել, ատիկա



թ. 17. Աստուածաշունչ Ոսկան վ.ի, էջ 569.



թ. 18. Աւետարան տըպ. 1729ի, էջ 358.
Ստորագր. ԳՐ ստորեւ ձախակողմը.